PRELIMINARY STUDY RESULTS ON FEATURES OF THE OFFICERS' EMOTIONAL INTELLIGENCE

Baghdasaryan S. M. (PAARA, Yerevan, Republic of Armenia)
baghdasaryan.svetlana@mail.ru
Ներկայացման ամս. 20.07.2021
Գրախոսման ամս. 10.08.2021
Տպագրության ընդունման ամս. 11.08.2021

Military Service is a special type of activity, which is associated with risks, emergent situations, performing complex professional tasks, emotional restraints. Given these conditions, servicemen ought to have a proper level of education, physical and psychological readiness. Within the mentioned factors, emotional intelligence as emotional stability aspect becomes of high value, because it assists commanders and chiefs in making prompt and appropriate decisions also in preventing conflicts during daily routine, maintaining calmness and judgment. Therefore, the development of emotional intelligence becomes a priority in the military domain.

The article presents the preliminary study results of the officers' emotional intelligence, which are presented according to the age. Officers have a low level of self-control and self-motivation skills, they have difficulty in controlling their emotions as well as their own behavior.

***Keywords**: Military Service, Officers, emotional intelligence, emotional restraint, self-motivation.*

DOI: https://doi.org/10.46991/SBMP/2021.4.2.073

Ժամանակակից հոգեբանության մեջ զինվորական ղեկավարը հանդես է գալիս՝ որպես առաջնորդ, որը մեծ ազդեցություն է գործում ենթակաների վրա՝ ոգեշնչելով և շարժառիթավորելով նրանց: Դ. Մակքլելանդն իր ուսումնասիրություններում հանգել է հետևյալ եզրակացության. այն զինվորական ղեկավարը, որն ունի հաղորդակցվելու հմտություն և բարձր մակարդակի հուզական բանականություն, յուրաքանչյուր իրավիճակում մյուսներից ավելի արդյունավետ է գործում [7, էջ 331]:

Ընդ որում՝ հարկ է նշել, որ վերոնշյալ հատկության ուսումնասիրումը կարևորվում է ոչ միայն պատերազմական ժամանակաշրջանում, որը պահանջում է զինծառայողից ինքնավերահսկման և ինքնակարգավորման, արագ կողմնորոշման և որոշումների ընդունման հատկություններ, այլև խաղաղ պայմաններում՝ զինվորական անձնակազմում բարենպաստ սոցիալ-հոգեբանական մթնոլորտի ստեղծման և պահպանման, մարտական պատրաստության գործընթացի կառավարման, ինչպես նաև մասնագետների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար: Այս առումով ռազմական

բնագավառի դասական, գերմանացի գեներալ և տեսաբան Կլաուզևիցը շեշտում էր, որ հրամանատարը պետք է ունենա ազնվության, կայունության և վճռականության առաքինություններ, որպեսզի որոշումների կայացման ժամանակ թույլ չտա ղեկավարել իրեն: Հրամանատարը պետք է իր հույզերը կարողանա օգտագործել ենթականերին ոգեշնչելու համար և երբեմն զսպել դրանք՝ իր դատողությունների տրամաբանվածությունն ապահովելու համար [5, էջ 88]:

Ներկայումս մարտը դարձել է արագընթաց՝ լի անորոշությամբ և անակնկալներով, ինչը հրամանատարից պահանջում է բարդ և լարված իրավիճակներում ավելի արագ կողմնորոշվելու, ճիշտ որոշումներ կայացնելու, դիմակայելու հակառակորդի հոգեբանական ճնշմանը, հուզական կայունություն դրսևորելու: Վերոգրյալ խնդիրները կարգավորելու համար սպան պետք է զարգացնի հուզական բանականությունը [1, էջ 101]: Հուզական բանականության ուսումնասիրության համար կիրառվել է Ն. Հոլի մեթոդիկան, որը տեղայնացված է: Այն բացահայտում է հետևյալ բաղադրիչները՝ հուզական տեղեկացվածություն, սեփական հույզերի կառավարում, ինքնամոտիվացիա, ապրումակցում, ուրիշ մարդկանց հույզերի կառավարում [4, էջ 41]: Նկար 1-ում ներկայացված են հուզական բանականության բաղադրիչների դրսևորումները:



Նկար 1. *Հուզական բանականության միջին ցուցանիշները (n=20)*

Ինչպես երևում է նախնական ուսումնասիրության արդյունքներից, հուզական տեղեկացվածության, ապրումակցման, այլ մարդկանց հույզերի ճանաչման ցուցանիշները գտնվում են միջին մակարդակում: Հուզական բանականության գումարային ցուցանիշը նույնպես միջին է: Ցածր է սեփական հույզերի կառավարումը և ինքնամոտիվացիան: Այս ամենը նշանակում է, որ նրանք դժվարությամբ են կարողանում կառավարել իրենց և ուրիշների հույզերը: Բացի դա նրանք չեն կարողանում կառավարել սեփական հույզերի դրսևորումները, որի հետևանքով դժվարությամբ են կառավարում իրենց

վարքը: Հուզական տեղեկացվածության միջին ցուցանիշը փաստում է, որ սպաները ոչ բոլոր իրավիճակներում են կարողանում գիտակցել և հասկանալ իրենց հույզերը, հուզական բառապաշարը հարուստ չէ: Ապրումակցման միջին ցուցանիշից ելնելով՝ նշենք, որ նրանք, որոշ իրավիճակներում են կարողանում հասկանալ ուրիշների հույզերը, կարեկցել և աջակցել նրանց: Այլ մարդկանց հույզերի ճանաչման միջին ցուցանիշը վկայում է, որ ոչ բոլոր իրավիճակներում կարող են հասկանալ ուրիշների հուզական վիճակները նրանց շարժուձևից, դիմախաղից, խոսքի հնչերանգից՝ այդպիսով չկարողանալով ազդեցություն գործել [2, էջ 158]:

Ընդհանրացնելով ուսումնասիրության արդյունքները՝ կարող ենք ասել, որ սպաների մոտ զարգացման ցածր մակարդակում է գտնվում սեփական հույզերը հասկանալու և գիտակցելու ընդունակությունը, նրանք դժվարությամբ են կառավարում հույզերի դրսևորումները, ինչպես նաև սեփական վարքը: Միջին ցուցանիշում բարձր է կողմնորոշումը դեպի այլ մարդկանց հույզերի ճանաչում՝ 12, 2.2 և հուզական տեղեկացվածություն՝ 12, 4.1 ստանդարտ շեղումներով:

Ինչպես երևում է ուսումնասիրության տվյալներից, սպաների հուզական բանականության ցուցանիշները զարգացման բարձր մակարդակում չեն, ինչը ենթադրում է, որ աշխատանքային ամենօրյա գործընթացում և լարված իրավիճակներում հուզական դրսևորումները կարող են խոչընդոտել ճիշտ, արագ որոշում կայացնել, վերահսկել իրավիճակի անորոշությունը, զանազան արտակարգ գործոնների ազդեցության նկատմամբ լինել կայուն:

Այժմ ներկայացնենք 30-ից 40 և 40-ից 50 տարիքային կազմում ընդ-գրկված սպաների հուզական բանականության միջին ցուցանիշները: Ստորև ներկայացված են հուզական բանականության միջին ցուցանիշներն՝ ըստ տարիքային խմբերի:

Աղյուսակ 1.

Հուզական ինտելեկտի միջին ցուցանիշներն՝ ըստ տարիքային կազմի (n=20)

N	Հուզական բանականության բաղադրիչները	30-ից 40 տարիքային խմբում ընդգրկված սպաներ, (n=10)		40-ից 50 տարիքային խմբում ընդգրկված սպաներ (n=10)	
		M	σ	M	σ
1	Հուզական տեղեկացվածություն	13	3.2	10	3.4
2	Սեփական հույզերի կառավարում	8	4.6	5	3.6
3	Ինքնամոտիվացիա	9	4.3	6	5.0
4	Ապրումակցում	12	3.4	11	2.7
5	Այլ մարդկանց հույզերի ճանաչում	12	2.5	12	2.0
6	Հուզական ինտելեկտի գումարային ցուցանիշ	53	18.0	44	16.7

Ինչպես երևում է **աղյուսակ 1-ից**, 30-ից 40 տարիքային կազմում ընդգրկված սպաների մոտ միջին մակարդակում են հուզական բանականության բոլոր ցուցանիշները, ինչը վկայում է այն մասին, որ նրանք որոշ իրավիճակներում կարողանում են կառավարել հույզերի դրսևորումները, հասկանալ և գիտակցել դրանք, ինչպես նաև սեփական վարքը: Որոշ իրավիճակներում կարողանում են հասկանալ ուրիշների հուզական վիճակները: 40-ից 50 տարիքային կազմում ընդգրկված սպաների մոտ ցածր մակարդակում են ինքնամոտիվացիայի և սեփական հույզերի կառավարման ցուցանիշները, ինչը վկայում է այն, որ չեն կարողանում գիտակցել և կառավարել իրենց հուզական դրսևորումները, ինչպես նաև՝ սեփական վարքը:

Զինծառայողների հուզական բանականության զարգացումը տարբեր երկրների բանակների առաջնահերթություններից է: Օր.՝ ԱՄՆ ԶՈՒ-ում անձնակազմի հուզական կայունության աստիճանի բարձրացման նպատակով՝ զինծառայողներին պատրաստում են իրական մարտական իրավիճակում գործողությունների [3]: Ավստրալիայի պաշտպանական ուժերը 2009 թ.-ից ի վեր առաջնային խնդիրներից մեկը համարում են ռազմական անձնակազմի ինքնակառավարման և հուզական կայունության հատկությունների զարգացումը: Սինգապուրի ԶՈՒ-ում զինվորները սովորում են սթրեսը և անհանգստությունը կառավարելու հմտությունները: Համապատասխան դասընթացների ավարտից հետո նրանք ենթարկվում են մարտական գործողություններին բնորոշ լարվածությունների՝ իրավիճակին արագ

արձագանքելու և հարմարվողական հատկություններ զարգացնելու նպատակով [7]:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ սպաներին բնորոշ են՝ սեփական հույզերի կառավարման և ինքնամոտիվացիայի ցածր մակարդակներ: Ընդհանրացնելով սպաների հուզական ոլորտին վերաբերող նախնական ուսումնասիրության արդյունքները՝ կարող ենք եզրակացնել, որ սպաների մոտ զարգացման ցածր մակարդակում է գտնվում սեփական հույզերը կառավարելու և ինքնամոտիվացիայի ընդունակությունները, նրանք դժվարությամբ են կառավարում հույզերի և զգացմունքների դրսևորումը, ինչպես նաև սեփական վարքը:

Կարծում ենք, որ ռազմական ուսումնական հաստատություններում վերապատրաստման դասընթացների և երկարաժամկետ ուսումնառության շրջանակներում անհրաժեշտ է մշակել և ներդնել հուզական բանականության զարգացմանը միտված նպատակային վարժանքներ (թրեյնինգ)՝ հաշվի առնելով զինվորականի գործունեության առանձնահատկությունները:

Գրականություն

1. **Բաղդասարյան Ս.** Ղեկավարի, հրամանատարի հուզական բանականությունը՝ որպես արդյունավետ կառավարման կարևոր գործոն, Երևան, «ՀԲ», 2019, № 4, էջ 101-110.
2. **Լոքյան Ա.** Հանրային ծառայողների հուզական կայունության առանձնահատկությունների հետազոտության արդյունքների վերլուծություն, Երևան, «Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու», 2016 թ. № 2, էջ 156-162.
3. **Зеленков М.** Морально-психологическая подготовка войск в армиях зарубежных стран Зарубежное военное обозрение. 2000, № 11.
4. **Фетискин Н. П., Козлов В. В., Мануйлов Г. М.** Социально-психологическая диагностика развития личности и малых групп, М. 2002, 490 с.
5. **David S. Abrahams_article.** Emotional Intelligence and Army Leadership: Give It to Me Straight! “Military Review”, March-April 2007, p. 86-93.
6. **Joseph Hammond**. Resilience training key for preparing Indo-Pacific forces. 2020, https://ipdefenseforum.com/2020/07/resilience-training-key-for-preparing-indo-pacific-forces/
7. **McClelland D._article.** Identifynig Competencies with Behavioral-Event Interviews. “Psychological Science”, 1998, Vol. 9, № 5, pp. 331-339.

РЕЗУЛЬТАТЫ ПРЕДВАРИТЕЛЬНОГО ИССЛЕДОВАНИЯ ОСОБЕННОСТИ ЭМОЦИОНАЛЬНОГО ИНТЕЛЛЕКТА ОФИЦЕРОВ

Багдасарян С. М. (ГАУ РА, Ереван, Армения)

Военная деятельность - особый вид деятельности, который связан с рисками, кризисными ситуациями, выполнением сложных профессиональных задач, эмоциональным напряжением. В таких условиях военнослужащие должны иметь надлежащий уровень образования, физической и психологической подготовки. Среди перечисленных факторов эмоциональный интеллект как аспект эмоциональной стабильности приобретает большое значение, поскольку помогает командирам и начальникам принимать быстрые и правильные решения, а также предотвращать конфликты, возникающие во время трудовой деятельности, сохранять спокойствие и рассудительность. Поэтому развитие эмоционального интеллекта становится приоритетом в армии.

В статье анализируются результаты предварительного исследования эмоционального интеллекта офицеров, которые также представлены по возрасту. У офицеров низкий уровень развития навыков самоуправления и самомотивации, им сложно управлять эмоциональными проявлениями, а также собственным поведением.

Ключевые слова: *военная деятельность, офицеры, эмоциональный интеллект, управление эмоциями, самомотивация.*

ՍՊԱՆԵՐԻ ՀՈՒԶԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Բաղդասարյան Ս. Մ. (ՀՀ Պետական կառավարման ակադեմիա, Երևան, Հայաստան)

Զինվորական գործունեությունը առանձնահատուկ տեսակի գործունեություն է, որը կապված է ռիսկերի, ճգնաժամային իրավիճակների, բարդ մասնագիտական առաջադրանքներ կատարելու, հուզական լարվածության հետ: Նման պայմաններում զինծառայողները պետք է ունենան կրթվածության պատշաճ մակարդակ, ֆիզիկական և հոգեբանական պատրաստությունը: Թվարկված գործոնների շարքում մեծ կարևորություն է ձեռք բերում հուզական կայունությունը պայմանավորող գործոն՝ հուզական բանականությունը, քանի որ այն հնարավորություն է տալիս արագ կերպով կայացնելու ճիշտ որոշումներ, նպաստում է կանխել աշխատանաքային գործունեության ընթացքում ծագող գժտությունները, պահպանել հանգստություն և դատողականություն: Ուստի

հուզական բանականության զարգացումը դառնում է ռազմական ոլորտում առաջնային խնդիր:

Հոդվածում վերլուծվում են սպաների հուզական բանականության նախնական ուսումնասիրության արդյունքները, որոնք ներկայացված են նաև՝ ըստ տարիքային կազմի: Սպաների մոտ զարգացման ցածր մակարդակում են սեփական հույզերի կառավարման և ինքնամոտիվացիայի ընդունակություն-ները, նրանք դժվարությամբ են կառավարում հուզական դրսևորումները, ինչպես նաև սեփական վարքը:

Հանգուցային բառեր՝ *սպաներ, հուզական բանականություն, հույզերի կառավարում, ինքնամոտիվացիա:*